040.0015.190111

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

13 հունվարի 2011 թվականի N 15-Ն

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ "ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ" ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասը և "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի տեղեկատվական և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության տեղեկատվական-փնտրողական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի տեղեկատվական և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության տեղեկատվական-փնտրողական համակարգերի միջև փոխանակվող տեղեկատվության ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2011 թվականի հունվարի 13-ի
N 15-Ն որոշման

ԿԱՐԳ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ "ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ" ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման գործընթացն ու պայմաններն ԱՊՊԱ-ի համակարգի տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԱՊՊԱ ՏՀ) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության (այսուհետ՝ ոստիկանություն) տեղեկատվական-փնտրողական համակարգի (այսուհետ՝ ոստիկանության ՏՓՀ) միջև:

2. ԱՊՊԱ ՏՀ-ի և ոստիկանության ՏՓՀ-ի միջև տեղեկատվության փոխանակման նպատակն է ԱՊՊԱ-ի համակարգի հուսալիության և վերահսկելիության ապահովումը և համակարգում հնարավոր խարդախությունների կանխումը:

3. Սույն կարգի կիրառումն ապահովում է՝

1) ոստիկանության կողմից այն ավտոտրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) հաշվառումը, նույնականացումը և համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը, որոնց համար առկա չէ գործող ԱՊՊԱ-ի մասին պայմանագիր.

2) գործող ԱՊՊԱ-ի մասին պայմանագրերի համար տրամադրված ԱՊՊԱ-ի կտրոնների սերիայի և համարի վերաբերյալ տեղեկատվությունը ոստիկանությանը փոխանցելու միջոցով ԱՊՊԱ-ի ոլորտում ապահովագրական կեղծիքների և այլ չարաշահումների հայտնաբերումն ու դրանց համար համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը.

3) ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ԱՊՊԱ-ի համակարգի այլ մասնակիցների կողմից ԱՊՊԱ-ի մասին պայմանագրերի, ՏՄ-ների, դրանց սեփականատերերի և օրինական հիմքով տիրապետող այլ անձանց ու ճանապարհատրանսպորտային պատահարների (այսուհետ՝ ՃՏՊ) վերաբերյալ ԱՊՊԱ ՏՀ-ին տրամադրվող տվյալների ամբողջականության ու իսկության ստուգումը.

4) ՏՄ-ների և ՃՏՊ-ների մասին ոստիկանության կողմից հավաքագրված տվյալների՝ որպես առաջնային տեղեկատվություն, ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններին տրամադրումը՝ վերջիններիս կողմից ապահովագրական հատուցումների գործընթացի կազմակերպման համար.

5) ոստիկանության ՏՓՀ-ից վարչական իրավախախտումների մասին տեղեկատվության փոխանցումը ԱՊՊԱ ՏՀ՝ "Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված Բոնուս-Մալուս գործակիցների հաշվարկման նպատակով:

4. ԱՊՊԱ ՏՀ-ի՝ ՏՄ-ների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին պայմանագրի կնքված լինելը և այդ պայմանագրին վերաբերող այլ տվյալները տեղեկատվության առաջնային աղբյուր են ոստիկանության համար:

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

5. Ոստիկանության ՏՓՀ-ի և ԱՊՊԱ ՏՀ-ի միջև տվյալների երկկողմ փոխանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող "Սի Բի Էյ Նեթ" միջբանկային համակարգչային ցանցի և դրա ռեզերվային ուղիների միջոցով:

6. Ոստիկանության ՏՓՀ-ի և ԱՊՊԱ ՏՀ-ի միջև փոխանակվող տվյալներն ունեն "Էքս Էմ Էլ" ձևաչափը (կառուցվածքը):

7. ԱՊՊԱ ՏՀ-ի և ոստիկանության ՏՓՀ-ի միջև տվյալները փոխանակվում են տվյալների օրական թարմացումների միջոցով (համապատասխանեցման կամ սինքրոնիզացման մեթոդ):

8. ԱՊՊԱ ՏՀ-ի և ոստիկանության ՏՓՀ-ի միջև տվյալները համապատասխանեցվում են ոչ ուշ, քան յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում՝ հաջորդ աշխատանքային օրվա համար:

9. Ոստիկանության ՏՓՀ-ից Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և հաշվառումից ժամանակավորապես հանված ՏՄ-ի և դրա սեփականատերերի տվյալները ԱՊՊԱ ՏՀ են փոխանցվում՝ յուրաքանչյուր ՏՄ-ի նույնացման համարին կցելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 15-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի 1.2-1.17-րդ կետերում նշված տվյալները, որոնք համապատասխանում են տվյալ ՏՄ-ի նույնացման համարին:

10. Ոստիկանության ՏՓՀ-ից վարորդի մասին տվյալները ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված յուրաքանչյուր վարորդական վկայականի համարին համադրելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 15-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի 2.2-2.26-րդ կետերում նշված տվյալները:

11. Ոստիկանության ՏՓՀ-ից վարորդի մասին տվյալները փոխանցվում են ԱՊՊԱ ՏՀ՝ միայն ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ապահովադիրների և լիազորված տիրապետողների վերաբերյալ տեղեկատվության ստուգման նպատակով, և չեն կարող տրամադրվել ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին:

12. ԱՊՊԱ ՏՀ-ի վարման համար "Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատու մարմինը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել ոստիկանության ՏՓՀ-ից ստացված անձնական տվյալների գաղտնիությունը:

13. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 15-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի 3.1-3.30-րդ կետերի՝ ոստիկանության կողմից ԱՊՊԱ ՏՀ փոխանցվող ՃՏՊ-ի մասին տեղեկատվությունը նախնական է և ներառում է զոհերով ու վիրավորներով ճանապարհատրանսպորտային պատահարի հաշվառման և նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի հաշվառման վերաբերյալ ոստիկանության կողմից վարվող քարտերում նշված տվյալները, ընդ որում, նշված տվյալները չեն կարող հիմք հանդիսանալ պատահարի առաջացման համար մեղավոր անձ ճանաչելու կամ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

14. Ապահովագրական կտրոնների սերիայի և համարի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ՏՄ-ների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 15-Ն որոշման N 2 հավելվածի N 2 աղյուսակի 1.3-1.5-րդ կետերում նշված տվյալները ԱՊՊԱ ՏՀ-ից ոստիկանության ՏՓՀ փոխանցվում են՝ ըստ յուրաքանչյուր պետական համարանիշի, որով հաշվառված ՏՄ-ի համար առկա է գործող ԱՊՊԱ-ի մասին պայմանագիր:

15. ԱՊՊԱ ՏՀ-ից ոստիկանության ՏՓՀ փոխանցվող տվյալները կարող են ներառել նաև ԱՊՊԱ ՏՀ-ի գործողության ընթացքում ի հայտ եկած ցանկացած անհամապատասխանության վերաբերյալ ծանուցումներ, ընդ որում, ծանուցումները կարող են լինել ազատ ձևաչափով:

III. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Ոստիկանության ՏՓՀ-ից՝ սույն կարգի 13-րդ կետում նշված ՃՏՊ-ի մասին տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով փոխանցվում է ԱՊՊԱ ՏՀ՝ սկսած 2011 թվականի փետրվարի 1-ից:

17. ԱՊՊԱ-ի համակարգում կիրառվող Բոնուս-Մալուս գործակիցների ճշգրիտ հաշվարկման համար ոստիկանության ՏՓՀ-ից վարչական իրավախախտումների մասին ամբողջ տեղեկատվությունը փոխանցվում է ԱՊՊԱ ՏՀ՝ սկսած 2012 թվականի հունվարի 1-ից:

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2011 թվականի հունվարի 13-ի
N 15-Ն որոշման

ՑԱՆԿ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ "ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ" ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ԱՂՅՈՒՍԱԿ N 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԱՊՊԱ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ

NN ը/կ	1. Տեղեկատվություն հաշվառված և հաշվառումից ժամանակավորապես հանված ավտոտրանսպորտային միջոցների (ՏՄ) մասին
1.1.	Նույնացման համարը
1.2.	Հաշվառման համարանիշը
1.3.	Տեսակը
1.4.	Մակնիշը, մոդելը (տիպարը)
1.5.	Հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը
1.6.	Հաշվառման վկայագիրն ում կողմից է տրվել
1.7.	Հաշվառման վկայագիրը երբ է տրվել
1.8.	Թափքի տեսակը
1.9.	Գույնը
1.10.	Գույնի ընտանիքը
1.11.	Թողարկման տարեթիվը
1.12.	"VIN" համարը
1.13.	Թափքի համարը
1.14.	Շարժիչի համարը

1.15.	Շարժիչի հզորությունը
_____	_____
1.16.	Հենասարքի համարը
_____	_____
1.17.	ՏՄ-ի սեփականատիրոջ անձնական տվյալները
_____	_____
1.17.1.	Ազգանունը
_____	_____
1.17.2.	Անունը
_____	_____
1.17.3.	Հայրանունը
_____	_____
1.17.4.	Ազգանունը (անգլերեն)
_____	_____
1.17.5.	Անունը (անգլերեն)
_____	_____
1.17.6.	Հայրանունը (անգլերեն)
_____	_____
1.17.7.	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը
_____	_____
1.17.8.	Սեռը
_____	_____
1.17.9.	Անձնագրի տվյալները (իրավաբանական անձի դեպքում՝ պետական
	գրանցման վկայականի համարը)
_____	_____
1.17.10.	Իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ-ն
_____	_____
1.17.11.	Բնակության (գտնվելու) մարզը
_____	_____
1.17.12.	Համայնքը
_____	_____
1.17.13.	Բնակավայրը (քաղաք/գյուղ)
_____	_____
1.17.14.	Փողոցը
_____	_____
1.17.15.	Տունը (շենքը)
_____	_____
1.17.16.	Բնակարանը
._____.

._____.
	2. Տեղեկատվություն վարորդի մասին
_____	_____
2.1.	Վարորդական իրավունքի վկայականի համարը
_____	_____
2.2.	Վկայականը տալու ամսաթիվը
_____	_____
2.3.	Վկայականի ժամկետի ավարտի ամսաթիվը
_____	_____
2.4.	Ազգանունը
_____	_____

2.5.	Անունը
_____	_____
2.6.	Հայրանունը
_____	_____
2.7.	Ծննդյան ամսաթիվը
_____	_____
2.8.	Սեռը
_____	_____
2.9.	Բնակության (գտնվելու) մարզը
_____	_____
2.10.	Համայնքը
_____	_____
2.11.	Բնակավայրը
_____	_____
2.12.	Անձնագրի համարը
_____	_____
2.13.	Անձնագիրը տալու ամսաթիվը
_____	_____
2.14.	Անձնագիրը տվող բաժինը
_____	_____
2.15.	Վարորդական ստաժը (առաջին անգամ վարորդական վկայական ստանալու
	տարեթիվը)
_____	_____
2.16.	Քաղաքացիությունը
_____	_____
2.17.	Բնակության մարզը
_____	_____
2.18.	Համայնքը
_____	_____
2.19.	Բնակավայրը
_____	_____
2.20.	Փողոցը
_____	_____
2.21.	Տունը (շենքը)
_____	_____
2.22.	Բնակարանը
_____	_____
2.23.	Վարորդական իրավունքի կարգը
_____	_____
2.24.	Ազգանունը (անգլերեն)
_____	_____
2.25.	Անունը (անգլերեն)
_____	_____
2.26.	Հայրանունը (անգլերեն)
_____	_____
	3. Տեղեկատվություն ՃՏՊ-ի մասին
_____	_____
3.1.	Նյութական վնասով ՃՏՊ-ի հաշվառման քարտի համարը
_____	_____
3.2.	Անձնական վնասով ՃՏՊ-ի հաշվառման քարտի համարը
_____	_____

3.3.	Նյութական կամ անձնական վնասով ՃՏՊ-ի հաշվառման քարտի տեսակը, տրամադրող ստորաբաժանման անվանումը
3.4.	ՃՏՊ-ի մասնակից ՏՄ-ների թիվը
3.5.	Տուժած անձանց թիվը
3.6.	Տուժած անձանց տվյալները
3.7.	ՃՏՊ-ի մասնակից ՏՄ-ների տվյալները
3.7.1.	Հաշվառման համարանիշը
3.7.2.	ՏՄ-ի տեսակը՝
3.7.2.1.	թեթև մարդատար
3.7.2.2.	միկրոավտոբուս
3.7.2.3.	ավտոբուս
3.7.2.4.	տրոլեյբուս
3.7.2.5.	մոտոցիկլ
3.7.2.6.	մոպեդ
3.7.2.7.	հեծանիվ
3.7.2.8.	բեռնատար
3.7.2.9.	բեռնատար՝ կցորդով
3.7.2.10.	լծկան ՏՄ
3.7.2.11.	այլ
3.7.2.12.	անհայտ է
3.7.3.	ՏՄ-ի հաշվառման վկայագրի սերիան, համարը
3.8.	ՃՏՊ-ի մասնակից վարորդի տվյալները՝
3.8.1.	վարորդական վկայականի սերիան, համարը
3.8.2.	որակավորումը
3.8.2.1.	համապատասխան
3.8.2.2.	ոչ համապատասխան

3.8.2.3.	անհայտ է
_____	_____
3.8.3.	սեռը
_____	_____
3.8.4.	տարիքը
_____	_____
3.8.5.	վարորդական փորձը՝ տարիներով
_____	_____
3.8.6.	ղեկի մոտ գտնվելու ժամանակը
_____	_____
3.8.7.	անվտանգության գոտին՝
_____	_____
3.8.7.1.	ամրացված է, օգտագործվում է
_____	_____
3.8.7.2.	ամրացված է, չի օգտագործվում
_____	_____
3.8.7.3.	ամրացված չէ
_____	_____
3.8.7.4.	անհայտ է
_____	_____
3.9.	Փախուստ ՃՏՊ-ի վայրից՝
_____	_____
3.9.1.	չի փախել
_____	_____
3.9.2.	դիմել է փախուստի, բայց հայտնաբերվել է
_____	_____
3.9.3.	դիմել է փախուստի, բայց չի հայտնաբերվել
_____	_____
3.10.	Նյութական վնասի տեսակը՝
_____	_____
3.10.1.	ՏՄ-ի
_____	_____
3.10.2.	բեռների
_____	_____
3.10.3.	շինությունների
_____	_____
3.10.4.	ճանապարհային կառույցների
_____	_____
3.10.5.	այլ
_____	_____
3.11.	ՏՄ-ի վնասվելը՝
_____	_____
3.11.1.	չկա
_____	_____
3.11.2.	դիմացից
_____	_____
3.11.3.	հետևից
_____	_____
3.11.4.	աջից
_____	_____
3.11.5.	ձախից

3.11.6.	տանիքից
3.11.7.	բազմակողմանի
3.11.8.	անհայտ է
3.12.	ՃՏՊ՝
3.12.1.	բախում
3.12.2.	շրջում
3.12.3.	խոչընդոտի վրաերթ
3.12.4.	կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ
3.12.5.	լծկան տրանսպորտային միջոցի վրաերթ
3.12.6.	կենդանու վրաերթ
3.12.7.	այլ պատահար
3.13.	Բախման տեսակը՝
3.13.1.	առջևից
3.13.2.	հետևից
3.13.3.	90 աստիճանի անկյան տակ
3.13.4.	կողային
3.13.5.	չկա
3.14.	ՃՏՊ-ի առաջացմանը նպաստող պայմանները՝
3.14.1.	սառցակալված ծածկ
3.14.2.	ծածկի բարձր սահելիություն
3.14.3.	անհարթ ծածկ
3.14.4.	կողնակի անբավարար վիճակ
3.14.5.	կամրջին հարակից նեղ երթևեկելի մաս
3.14.6.	կամրջի տակով անցնող նեղ երթևեկելի մաս
3.14.7.	երկաթգծի գծանցի անբավարար վիճակ

3.14.8.	անբավարար տեսանելիություն
3.14.9.	անբավարար լուսավորություն
3.14.10.	ծառեր, սյուներ և այլն
3.14.11.	պաշտպանիչ հարմարանքների բացակայություն
3.14.12.	ճանապարհային նշանների թերություններ
3.14.13.	լուսացույցի թերություններ
3.14.14.	գծանշման թերություններ
3.14.15.	աշխատանքներ երթևեկելի մասում
3.14.16.	այլ պայմաններ
3.14.17.	չկա
3.15.	Իրավախախտում վարորդի կողմից՝
3.15.1.	ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցի վարում
3.15.2.	արագության գերազանցում
3.15.3.	նշանների և գծանշումների պահանջների չկատարում
3.15.4.	մարդկանց փոխադրման կանոնների խախտում
3.15.5.	շարքերի վերադասավորման կանոնների խախտում
3.15.6.	հետիոտնային անցումների անցման կանոնների խախտում
3.15.7.	ընդհանուր օգտագործման ՏՄ-ի կողմից կանգառի անցման կանոնների խախտում
3.15.8.	լուսային սարքերից օգտվելու կանոնների խախտում
3.15.9.	առաջինն անցնելու իրավունքի կանոնների խախտում
3.15.10.	կանգառի և կայանման կանոնների խախտում
3.15.11.	երկաթուղային գծանցների անցման կանոնների խախտում
3.15.12.	բեռների փոխադրման կանոնների խախտում
3.15.13.	քարշակման կանոնների խախտում
3.15.14.	վազանցի կանոնների խախտում

3.15.15.	խաչմերուկի անցման կանոնների խախտում
_____	_____
3.15.16.	ՏՄ-ների միջև տարածության պահպանման կանոնների խախտում
_____	_____
3.15.17.	ՏՄ-ի անսարքություն
_____	_____
3.15.18.	ղեկի մոտ քնել
_____	_____
3.15.19.	այլ խախտումներ
_____	_____
3.15.20.	չկա
_____	_____
3.15.21.	անհայտ է
_____	_____
3.16.	ՏՄ-ի անսարքությունը՝
_____	_____
3.16.1.	արգելակման համակարգ
_____	_____
3.16.2.	ղեկի կառավարում
_____	_____
3.16.3.	անիվներ
_____	_____
3.16.4.	անվադողեր
_____	_____
3.16.5.	լուսավորություն
_____	_____
3.16.6.	կցորդում
_____	_____
3.16.7.	բեռ
_____	_____
3.16.8.	գործարանային
_____	_____
3.16.9.	չկա
_____	_____
3.16.10.	անհայտ է
_____	_____
3.17.	Լուսային պայմանները՝
_____	_____
3.17.1.	բնական լուսավորվածությամբ
_____	_____
3.17.2.	գիշերը՝ արհեստական լուսավորվածությամբ
_____	_____
3.17.3.	գիշերը՝ առանց արհեստական լուսավորվածության
_____	_____
3.17.4.	լուսավորությունը միացված չէ
_____	_____
3.18.	Եղանակը՝
_____	_____
3.18.1.	պարզ
_____	_____
3.18.2.	մառախուղ

3.18.3.	քամի
3.18.4.	անձրև
3.18.5.	ձյուն
3.19.	ՃՏՊ-ի ամսաթիվը
3.20.	ՃՏՊ-ի շաբաթվա օրը
3.21.	ՃՏՊ-ի ժամը
3.22.	Վայրը՝
3.22.1.	դեպքի վայրը
3.22.2.	քաղաքի, գյուղի, մարզի անվանումները
3.22.3.	ուղղությունը
3.22.4.	հեռավորությունը
3.22.5.	ճանապարհի անվանումը
3.22.6.	դեպքի վայրը
3.22.7.	խաչմերուկներում ճանապարհի անվանումը
3.22.8.	հեռավորությունը
3.23.	ՏՄ-ի մանները՝
3.23.1.	երթևեկության սկիզբը
3.23.2.	առաջ ընթացք
3.23.3.	հետ ընթացք
3.23.4.	հետադարձի կատարում
3.23.5.	աջ շրջադարձի կատարում
3.23.6.	ձախ շրջադարձի կատարում
3.23.7.	վազանցի կատարում
3.23.8.	շարքերի վերադասավորում
3.23.9.	ճանապարհից դուրս գալ

3.23.10.	հոսքից հեռանալ
_____	_____
3.23.11.	հոսքի մեջ մուտք գործել
_____	_____
3.23.12.	կանգառ կատարել
_____	_____
3.23.13.	կայանված
_____	_____
3.23.14.	սպասող
_____	_____
3.23.15.	այլ
_____	_____
3.23.16.	անհայտ է
_____	_____
3.24.	Բաժանարար գոտին՝
_____	_____
3.24.1.	կա
_____	_____
3.24.2.	չկա
_____	_____
3.25.	Երթևեկությունը՝
_____	_____
3.25.1.	միակողմանի
_____	_____
3.25.2.	երկկողմանի
_____	_____
3.26.	Երթևեկության կարգավորումը՝
_____	_____
3.26.1.	բացակայում է
_____	_____
3.26.2.	հորիզոնական գծանշումով
_____	_____
3.26.3.	հետիոտնային անցում
_____	_____
3.26.4.	լուսացույցով
_____	_____
3.26.5.	տեսուչի վերահսկողությամբ
_____	_____
3.26.6.	լուսացույցը չի աշխատում
_____	_____
3.26.7.	"Զիջեք ճանապարհը" նշանով
_____	_____
3.27.	Ճանապարհի երկրաչափությունը՝
_____	_____
3.27.1.	ուղիղ և հարթ
_____	_____
3.27.2.	միայն շրջադարձեր
_____	_____
3.27.3.	միայն բարձունք
_____	_____
3.27.4.	շրջադարձեր և բարձունք

_____	_____
3.27.5.	կամուրջ
_____	_____
3.27.6.	լիցք>3 մ
_____	_____
3.28.	Ծածկի տեսակը՝
_____	_____
3.28.1.	ասֆալտբետոնե
_____	_____
3.28.2.	կոպճային
_____	_____
3.28.3.	հողային
_____	_____
3.29.	Երթևեկելի մասի վիճակը՝
_____	_____
3.29.1.	չոր
_____	_____
3.29.2.	թաց
_____	_____
3.29.3.	ձյունածածկ
_____	_____
3.29.4.	սառցակալված
_____	_____
3.30.	Ճանապարհի տեսակը՝
_____	_____
3.30.1.	միջպետական
_____	_____
3.30.2.	հանրապետական
_____	_____
3.30.3.	տեղական
_____	_____
3.30.4.	փողոց
_____	_____
3.30.5.	այլ
._____.

ԱՂՅՈՒՍԱԿ N 2. ԱՊՊԱ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ

._____.
NN	1. ՏՄ-ների մասին տեղեկատվություն, որոնց համար առկա է գործող
ը/կ	ԱՊՊԱ-ի մասին պայմանագիր
____	_____
1.1.	ԱՊՊԱ-ի կտրոնի սերիան և համարը
____	_____
1.2.	N 1 հաշվառման համարանիշ
____	_____
1.3.	N 2 հաշվառման համարանիշ
____	_____

1.4.	Հաշվառման վկայագրի սերիան և համարը
____	_____
1.5.	ԱՊՊԱ-ի մասին պայմանագրի կողմ հանդիսացող ապահովագրական
	ընկերության անվանումը
____	_____
1.6.	ԱՊՊԱ-ի մասին պայմանագրի գործողության ավարտը (օրը, ամիսը,
	տարեթիվը)
____	_____
1.7.	ԱՊՊԱ-ի մասին պայմանագրի գործողության ավարտը (ժամը)
._____.